

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԵՏԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՆՆԴԻՐՆԵՐԸ***

Խոսքովադուխտ Ազատյան

Քանայի բառեր՝ Արևելյան Եվրոպա, քաղաքական արդիականացում, կառավարման համակարգ, փոխակերպում, հեղափոխություն, էվոլյուցիա, հետսոցիալիստական զարգացումներ, խորհրդարան:

Հասարակության ժողովրդավարացման գործընթացի առանցքային բաղկացուցիչներից մեկը քաղաքական արդիականացումն է, ինչը տեղի է ունենում քաղաքական համակարգի փոփոխմամբ: Քաղաքական արդիականացման գործընթացը ենթադրում է պետական իշխանության սահմանափակման արդյունավետ համակարգի ներդրում, դրա նկատմամբ վերահսկողական գործիքակազմի սահմանում, քաղաքացիական հասարակության ինստիտուտների զարգացում և այլն:

Աշխարհի երկրներ համակարգի փլուզումից հետո պատմական նոր իրականություն ձևավորվեց: Աշխարհակարգի փոփոխությունը հանգեցրեց ուժային վերադասավորումների և արմատական քաղաքական տեղաշարժերի: Փոխակերպման գործընթացներից ամնասն չմնացին նաև Արևելյան Եվրոպայի հետկոմունիստական երկրները: Նախկին սոցիալիստական ձամբարի տարածքում ամբողջատիրական վարչակարգերի անկումից և նորանկախ պետությունների առաջացումից հետո արագ զարգացող արդիականացման գործընթացները շոշափում էին հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտները, մասնավորապես քաղաքական ոլորտը: Նշված գործընթացների պատճառահետևանքային հիմքերի վերաբերյալ քաղաքական վերլուծաբանների շրջանում առկա են տարբեր մոտեցումներ: Համաձայն դրանցից մեկի, որի կրողներն են նաև լիտվացի պատմաբան **Մ. Ադունաստը** և ռուս վերլուծաբան **Գ. Կասպարովը**, կոմունիստական վարչակարգերի անկումը Արևելյան Եվրոպայի երկրներում դիտվում է որպես երկարատև ազգային-ազատագրական պայքարի արդյունք[1]: Հաջորդ մոտեցմանը հարող քաղաքագետները, որոնց թվին դասվում է **Ա. Ալկասովը**, հետկոմունիստական երկրներում ընթացող կերպափոխման և ժողովրդավարացման գործընթացները կապում են արտաքին գործոնների, մասնավորապես «համաշխարհային սոցիալիստական համակարգի» փլուզման, «երկրներ» աշխարհի ավարտի, ԱՄՆ-ի միանձնյա լիզերության հաստատման, հետկոմունիստական պետությունների՝ տնտեսական և աշխարհաքաղաքական ինտեգրման մարտահրավերների, ժողովրդավարացման մասին պատկերացումների գերակայության հետ [2]:

Երկու մոտեցումներն էլ ընդունելի են, սակայն գերակշռող է այն տեսակետը, որի համաձայն Արևելյան Եվրոպայի երկրների քաղաքական արդիականացումը առավելապես դիտվում է որպես ԽՍՀՄ փլուզման և աշխարհակարգի փոփոխման անխուսափելի հետևանք: Սրանով թերևս կարելի է բացատրել այն, որ կերպափոխման գործընթացի սկզբնական փուլում տարածաշրջանի որոշ երկրների կառավարող դասի ներկայացուցիչներ պատրաստ չէին օպերատիվ որոշումներ կայացնելու: Հեղափոխությունները դոմինոյի սկզբունքով տարածաշրջանում հաջորդում էին մեկը մյուսին. թավշ-

* Հոդվածն ընդունվել է 04.02.20:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ք.գ.դ., պրոֆեսոր Ա. Ենգոյանը: 13.02.20:

յա հեղափոխությունների միջոցով Լեհաստանից, Հունգարիայից, պատի քանդումով Արևելյան Գերմանիայից փոփոխությունների ալիքը թևակոխեց Չեխիա, Ռումինիա և տարածաշրջանի այլ երկրներ: 1989 թ. Չեխոսլովակիայում տեղի ունեցած թավշյա հեղափոխությունն այսպես է բնութագրում չեխ հետազոտող **Շ. Չերնոուշեկը**. «Եթե Լեհաստանում կերպափոխման գործընթացը տևել է 10 տարի, Հունգարիայում՝ 10 ամիս, Արևելյան Գերմանիայում՝ 10 շաբաթ, ապա Չեխիայից տասը օր է պահանջվել թավշյա հեղափոխություն իրականացնելու համար[3]:

Տարածաշրջանի երկրների քաղաքական արդիականացման հաջորդ առանձնահատկությունը ևս կապված է արտաքին գործոնի, մասնավորապես արտաքին կողմնորոշման ընտրության հարցի հետ: 1990 ական թթ. սկզբին, երբ տարածաշրջանի շատ պետություններ իրենց առջև «Եվրոպա վերադառնալու» խնդիր դրեցին, ԵՄ և հյուսիսատլանտյան հանրություն մուտք գործելու կարևորագույն պայմաններ սահմանվեցին արևմտյան ժողովրդավարական չափանիշներին հետևելը և ԵՄ-ի իրավական նորմերի ընդունումը: Վերոհիշյալ գործընթացի հետաքրքրական մեկնաբանություն է տալիս բրիտանացի քաղաքագետ **Մ. Լեոնարդը**՝ նշելով. «Բոլոր երկրները, որոնք ցանկանում էին մուտք գործել ԵՄ, պետք է պարզապես «կուլ տային» եվրոպական օրենքների 80.000 էջերը և սեփական օրենքները համապատասխանեցնեին դրանց[4]»: Նշված պահանջները տարածաշրջանի երկրների քաղաքական էլիտաներին թելադրում էին հետևել խաղի ժողովրդավարական կանոններին կամ էլ վատագույն դեպքում դրանց հետևելու պատրանք ստեղծել՝ պայքարելով էքստրեմիզմի, նեպոտիզմի, կոռուպցիայի, պետական կառավարման համակարգի անարդյունավետության դեմ: Սա է պատճառներից մեկը, որ որպես ինստիտուցիոնալ զարգացման ուղի՝ տարածաշրջանի երկրներն ընտրեցին եվրոատլանտյան մոդելը:

Բնականաբար, խիստ կարճ ժամանակամիջոցում տեղի ունեցող ինստիտուցիոնալացման մեծածավալ գործընթացները չէին կարող դժվարություններ չառաջացնել: ԵՄ-ի համար գրված իրավական ակտերը օտար էին սոցիալիստական ձամբարի ազդեցության դաշտում երկար տարիներ գտնված երկրների համար: Բացի դրանից՝ ԵՄ մուտք գործելու հնարավորությունը պայմանավորված էր ոչ միայն տարածաշրջանի իշխանությունների կողմից վարչարարական փոփոխություններ կատարելու պատրաստակամությամբ, այլև բնակչության և քաղաքական ընտրանու՝ նոր արժեքները և «խաղի նոր կանոնները» ընդունելու ցանկությամբ և կարողությամբ:

Ըստ **Ջ. Պրիդհեմի**՝ ԵՄ-ի գործունեությունը տարածաշրջանի երկրներում իրագործվում էր ոչ թե ժողովրդավարության ազատական հայեցակարգի խորը գիտակցման պայմաններում, այլ ներկայացնում էր բյուրոկրատական ընդլայնում՝ հիմնված պահանջների բավարարման ֆորմալ բնույթի վրա[5]: Մարդու իրավունքների և իրավական պետության սկզբունքների՝ երբեմն ձևական պաշտպանության մեխանիզմները, որոնք ներդրվել էին ինստիտուցիոնալ վակուումի պայմաններում, հաճախ արդյունք չէին տալիս: Ժողովրդավարության բացարձակացումը հաշվի չէր առնում ազգային մշակութային առանձնահատկությունները:

Արդյունքում տարածաշրջանի որոշ երկրներ այսօր տառապում են այսպես կոչված «անավարտ մոդեռնիզացիայի հիվանդությամբ»: Եթե սկզբնական շրջանում տարածաշրջանի երկրների մեծամասնության քաղաքական դերակատարները պատրաստակամորեն ընդունում էին դրսից պարտադրված քաղաքական և տնտեսական ստանդարտները, ինչպես նաև արևմտյան ժողովրդավարության ինստիտուցիոնալ մոդելը, ապա կայունության հաստատումից հետո տարածաշրջանի ժողովուրդները սկսեցին փնտրել ժողովրդավարացման այնպիսի գործիքներ, որոնք կհամապատասխանեին ժողովրդավարական զարգացման մեթոդների, ձևերի և տեմպերի վերաբերյալ իրենց սեփական պատկերացումներին:

Արևելյան Եվրոպայի հետկոմունիստական երկրներում ընթացող փոխակերպման գործընթացները չէին կարող տեղի ունենալ առանց համապատասխան իրավանորմատիվային հիմքի: Ժողովրդավարական փոփոխությունները ֆորմալիզացիայի, ինստիտուցիոնալացման և օրինականացման կարիք էին զգում: Քաղաքական և ինստիտուցիոնալ թերևս ամենաբարդ խնդիրը կառավարման ձևի ընտրությունն էր: Ի տարբերություն նախկին ԽՍՀՄ հանրապետությունների, որտեղ նոր սահմանադրական մոդելը հիմնվեց ուժեղ նախագահական իշխանության հայեցակարգի վրա, Արևելյան Եվրոպայի երկրների մեծ մասում քաղաքական և իրավական բարեփոխումների գործընթացը սկզբիցնեթ կենտրոնացավ ներկայացուցչական մարմինների ձեռքում, ինչը հետագայում հանգեցրեց քաղաքական համակարգում խորհրդարանի գերակա դերի սահմանադրական ամրագրմանը:

Անշուշտ, հաջող կերպափոխման համար միայն սահմանադրական ամրագրումները բավարար պայման չէին կարող լինել. տարածաշրջանի երկրների ինստիտուցիոնալ փոխակերպումների շարժընթացը և բնույթը պայմանավորված էին մի շարք այլ գործոններով՝ քաղաքական, տնտեսական զարգացման առանձնահատկություններով, գաղափարախոսական, ազգայնական տարրերի առկայությամբ, ինչպես նաև պատմական նախադրյալներով: Այս հանգամանքով է բացատրվում տարածաշրջանի տարբեր երկրներում քաղաքական փոխակերպումների տարաբնույթ լինելը: Պայմանականորեն «նոր ժողովրդավարություններ», հետամբողջատիրական երկրներ, «անցումային ժողովրդավարություններ» կոչվող Արևելյան Եվրոպայի երկրներից յուրաքանչյուրը, ազգային ավանդույթների, ինքնության, սոցիալ-մշակութային և քաղաքական մշակույթի առանձնահատկություններից ելնելով, ժողովրդավարական զարգացման և քաղաքական արդիականացման յուրօրինակ ճանապարհով է ընթացել:

Սակայն չնայած նշված տարբերություններին՝ քաղաքական բարեփոխումների սկզբունքներն ու ուղղությունները այս պետություններում շատ ընդհանուր գծեր ունեն: Կոմունիստական վարչաձևը, տևելով շուրջ կես դար, այս երկրների հասարակական-քաղաքական կյանքի վրա թողել է իր դրոշմը: Նախքան 1990-ական թթ. սկսված քաղաքական փոխակերպումները՝ տարածաշրջանի պետություններին հատուկ էր քաղաքական և պետական կառավարման միաձև՝ խորհրդային մոդելը, որը հիմնված էր կառավարող կոմունիստական կուսակցության միանձնյա իշխանության վրա: Սոցիալիստական համակարգի փլուզումից հետո տարածաշրջանի բոլոր երկրներն իրենց առջև թափափարկական հետևյալ խնդիրը դրեցին՝ կառուցել մարդու իրավունքներն ու ազատությունները երաշխավորող ժողովրդավարական իրավական պետություն[6]:

Հաջորդ կարևորագույն խնդիրը, որի լուծման առաջ կանգնած էին տարածաշրջանի բոլոր երկրները, պետական կառավարման համակարգի ապակենտրոնացումն էր, գործող սահմանադրություններում իշխանությունների տարանջատման սկզբունքի հռչակումը: Կարևոր էր այնպիսի սահմանադրական կարգի ընտրությունը, որը հստակ կամրագրեր պետական իշխանության յուրաքանչյուր մարմնի տեղը քաղաքական հանակարգում, վերջիններիս փոխգործակցությունը քաղաքական այլ ինստիտուտների հետ: Այսինքն, նոր սահմանադրությունների ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված էր ոչ միայն իրավական հիմք ստեղծելու և անցկացված քաղաքական-իրավական վերափոխումներին լեգիտիմություն հաղորդելու, այլև զսպումների և հակակշիռների այնպիսի համակարգ ձևավորելու ձգտմամբ, որի պայմաններում իսկպատես կգործեր իշխանությունների տարանջատման սկզբունքը: Այն ենթադրում է պետական իշխանության յուրաքանչյուր մարմնի իրավասությունների սահմանների խիստ հստակեցում, միմյանց գործերին չմիջամտելու սկզբունքի հստակ պահպանում և այլն:

Արևելյան Եվրոպայի երկրների քաղաքական համակարգերի վերլուծությունը ցույց է տալիս, որ տարածաշրջանի երկրներում հիմնականում կա՛մ խորհրդարանա-

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2020

կան, կա՛մ կիսանախագահական հանրապետություններ հաստատվեցին: Այն երկրներում, որտեղ որոշ չափով արմատավորված էին քաղաքացիական հասարակության, ժողովրդավարական ավանդույթները, և առկա էր համեմատաբար կայուն կուսակցական համակարգ, ձևավորվեցին կառավարման խորհրդարանական համակարգեր (Հունգարիա, Սլովակիա, Չեխիա և այլն), իսկ այն երկրները, որոնք այլուրալիստական քաղաքացիական հասարակության ավանդույթների այդքան էլ հարուստ փորձ չունեին, ձևավորեցին կիսանախագահական կառավարման համակարգեր՝ նախագահի գերիշխող դերով (Լեհաստան, Ռումինիա և այլն):

Գիտական գրականության մեջ Արևելյան Եվրոպայի հետկոմունիստական երկրների դասակարգման տարբեր մոտեցումներ կան, որոնց ուսումնասիրումը թույլ է տալիս բացահայտել տարածաշրջանի պետությունների կառավարման համակարգերի արդիականացման մի շարք օրինաչափություններ: **Մ. Շուգարտը և Զ. Քերին**, իրենց դասակարգման հիմքում դնելով նախագահի լիազորությունների սահմանը, տարածաշրջանի պետությունները բաժանում են 2 խմբի՝

1. նախագահական իշխանության ցածր ինդեքս երկրներ՝ Բուլղարիա, Սլովակիա, Սլովենիա, Մակեդոնիա
2. նախագահի և վարչապետի ուժերի հարաբերակցության հավասար մակարդակ ունեցող երկրներ՝ Խորվաթիա, Լեհաստան, Ռումինիա:

Հեղինակները տարածաշրջանում չեն առանձնացնում նախագահի լիազորությունների բարձր ինդեքս ունեցող երկրներ: Նախագահական իշխանության ցածր ինդեքս ունեցող երկրները, ըստ նրանց, գրանցել են ժողովրդավարական զարգացման դրական ցուցանիշներ: Որպես օրինակ նշում են Բուլղարիայում և Սլովենիայում թույլ նախագահի դերակատարությամբ կիսանախագահական մոդելի բարեհաջող ազդեցությունը ժողովրդավարացման գործընթացի վրա:

Երկրորդ խմբին պատկանող պետությունները **Մ. Շուգարտը և Զ. Քերին** բնորոշում են քաղաքական կայունության բարձր մակարդակով: Ըստ հեղինակների՝ կիսանախագահական մոդելը ևս դրական ազդեցություն է ունեցել այս խմբին պատկանող երկրների ժողովրդավարացման գործընթացի վրա: Միևնույն ժամանակ գտնում են, որ կիսանախագահական համակարգը գերժ է թերություններից: Հեղինակները բերում են ռումինական ժողովրդավարության օրինակը՝ քննադատելով այն իշխանության ճյուղերի միջև տեղի ունեցող կոնֆլիկտների պատճառով: Կիսանախագահականության բնույթով պայմանավորված՝ քաղաքական հակադրությունները այս երկրում հաճախ հանգեցրել են քաղաքական ճգնաժամերի, լիդերների պոպուլիստական հայտարարությունների և ապարդյուն որոշումների կայացման[7]:

Ի տարբերություն **Մ. Շուգարտի և Զ. Քերիի՝ Թ. Սիդելիուսը**, հետազոտելով Արևելյան Եվրոպայի երկրների քաղաքական համակարգերը, եկել է այն եզրահանգման, որ խորհրդարանական կառավարման համակարգի համեմատ՝ կիսանախագահական համակարգը նշանակալի սպառնալիք է ժողովրդավարացման համար: Ըստ նրա՝ նշված համակարգը վտանգավոր է մի քանի պատճառներով՝

1. ուժեղ ինստիտուցիոնալ իշխանություն ունեցող պետության դեկավարի՝ կառավարման այլ ճյուղերի վրա ազդելու հավանականությունը մեծ է,
2. առաջատար քաղաքական դերակատարների անձնական ամբիջիաները զգալի դեր են խաղում,
3. գործադիր իշխանության ներսում առկա հակասությունների հիմքում ընկած է «կրկնակի լեգիտիմության երկրմտորանքը»[8]:

Ըստ **Թ. Սիդելիուսի՝** կիսանախագահական համակարգի հիմնական թերությունն այսպես կոչված «ներկառավարական» կոնֆլիկտների մեջ է, որին բնորոշ է նախագահի և վարչապետի մղած պայքարը գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողություն հաստատելու համար: Հեղինակը նշում է, որ այս պայքարը բնական է, սա-

կայն վտանգավոր՝ կիսանախագահական համակարգերի համար: Ի հավելումն բերում է Շվեդիայի օրինակը, որտեղ ևս ականատես ենք լինում թագավորի և գործադիր միջև պայքարի: Սակայն կիսանախագահական կառավարման համակարգի պարագայում նման պայքարի վտանգավորության առնվազն երկու լուրջ պատճառ է մատնանշում: Առաջին՝ նախագահը գործադիր իշխանության մաս է կազմում և իշխանական լիազորությունները կիսում է կառավարության հետ: Այս համատեքստում նախագահի և վարչապետի միջև ծագած ցանկացած հակամարտություն կարող է սպառնալիք լինել քաղաքական կայունության և գործադիր իշխանության արդյունավետության համար: Այս փաստը հատկապես վտանգավոր է Արևելյան Եվրոպայի երկրների համար, որտեղ ժողովրդավարությունը անկայուն է: Հաջորդ պատճառը կապված է կիսանախագահական համակարգին բնորոշ «կրկնակի լեգիտիմության երկընտրանքի» հետ, ինչը ենթադրում է իշխանական որոշ լծակների կենտրոնացում նախագահի, որոշներն էլ վարչապետի ձեռքում, որն էլ անխուսափելիորեն հանգեցնում է իշխանության վերաբաշխման կոնֆլիկտների: Նույնիսկ երբ նախագահը և վարչապետը միևնույն քաղաքական կուսակցության ներկայացուցիչներ են, նրանցից յուրաքանչյուրի անձնական նկրտումները կարող են դառնալ քաղաքական հակամարտության առաջացման պատճառ:

Ինչ վերաբերում է հետկոմունիստական երկրներին, ապա **Թ. Սիդելիուսը** քաղաքական ձգնաժամների առաջացումն այստեղ կապում է նախագահի նկատմամբ քաղաքացիների աճող վստահության հանգամանքի հետ՝ բերելով Լեհաստանի և Ռուսաստանի օրինակները, երբ անցման սկզբնական փուլում նախագահի պաշտոնում հայտնվեցին հին կոմունիստական վերնախավի ներկայացուցիչները (օրինակ՝ Լ. Վալենսան, Բ. Ելցինը), որոնք հետագայում զգալիորեն ընդլայնեցին Սահմանադրությամբ իրենց տրված լիազորությունների շրջանակը և ազդեցություն հաստատեցին խորհրդարանի և վարչապետ-տեխնոկրատների նկատմամբ^[9]: Երբ վարչապետները փորձում էին բարեփոխումներ իրականացնել, որպես կանոն, հանդիպում էին նախագահների կոշտ դիմադրությանը, որոնք կանխում էին իրենց գործունեության ոլորտին խառնվելու փորձերը և զգուշորեն պաշտպանում երկրում քաղաքական բարեփոխումների ընթացքն ուղեկցելու մենաշնորհային իրավունքը: Հետկոմունիստական երկրներից շատերում նման կոնֆլիկտները լուծվել են վարչապետի իրաժարականով:

Հեղինակի իրականացրած ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ Արևելյան Եվրոպայի երկրների մեծ մասի կողմից սկզբնական փուլում կիսանախագահական համակարգի օգտին ընտրություն կատարելը նախևառաջ փոխզիջումային տարբերակ էր, որը բավարարում էր ինչպես ընդդիմության, այնպես էլ հին կոմունիստական վերնախավի շահերը: Երկրորդ, կիսանախագահականությունը հնարավորություն էր տալիս ի դեմս նախագահի գտնել կայունության երաշխավորի և պահպանել քաղաքական համակարգի կայունությունը «թույլ» խորհրդարանի գոյության պայմաններում:

Իսկ Արևելյան Եվրոպայի երկրների կողմից խորհրդարանական համակարգերի ընտրությունը **Թ. Սիդելիուսը** կապում էր այդ երկրներում զարգացած պառլամենտարիզմի ավանդույթների հետ, ինչը կնպաստեր արդեն գոյություն ունեցող քաղաքական ինստիտուտների և ժողովրդավարության զարգացմանը:

Ն. Բուխարինի հետազոտությունների համաձայն՝ տարածաշրջանի բոլոր երկրներում գործադիր իշխանության կենտրոնը կառավարությունն է՝ վարչապետի գլխավորությամբ: Հեղինակը Արևելյան Եվրոպայի հետկոմունիստական երկրների մեծ մասում իշխանությունների տարանջատման համակարգում վարչապետների իրականացրած դերակատարությունը համեմատում է Գերմանիայում և Ավստրիայում կանցլերների դերի հետ^[10]: Նման համեմատությունը տեղին է նաև լեհական «ուժեղ» նախագահի մոդելի հետ համեմատության պարագայում:

են Լեհաստանը և Հունգարիան, քանի որ նոր հասարակական կարգին անցնելու հիմնական մեխանիզմը այս երկրներում «պակտերն» էին, «կլոր սեղանները», որոնցում ներգրավված էին կառավարող էլիտայի և ընդդիմության ներկայացուցիչները: Նշված «կլոր սեղանների» համաձայնագրերը, որոնք վերաբերում էին հասարակական-քաղաքական զարգացման առանցքային հարցերին (ինչպիսիքն է լինի ապագա սահմանադրական կարգը, իշխանության իրականացման կոալիցիոն սկզբունքի կիրառումը և այլն), դարձան առաջին քայլերը այս երկրներում քաղաքական լայնամասշտաբ փոխակերպումների իրականացման ճանապարհին^[14]:

Հատկանշական է, որ նշված երկրներում ի սկզբանե քաղաքական և սահմանադրաիրավական պայմաններ էին ստեղծվել պառլամենտարիզմի ձևավորման և զարգացման համար: Հատկապես որոշիչ նշանակություն ունեցող մինչկոմունիստական շրջանում գերակայած կայուն քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական ավանդույթների գործոնը: Հունգարիայի, Լեհաստանի, Սերբիայի, Խորվաթիայի և Չեխիայի քաղաքական համակարգերի ձևավորման վրա վճռորոշ ազդեցություն են ունեցել Եվրոպայի նշված տարածաշրջանի պատմական զարգացման առանձնահատկությունները: Խոսքն առաջին հերթին միջնադարյան պետականության հարուստ ավանդույթներ ունենալու մասին է: Այսպես, Հունգարիայի թագավորությունը զարգացման գազաթնակետին է հասել 1000-1241 թթ., Լեհականը՝ 10-րդ դարի վերջին և նշված ժամանակից ի վեր եղել է Եվրոպայի կարևորագույն քաղաքական խաղացողներից մեկը^[15]:

Անցման խառը տիպի օրինակ է Չեխոսլովակիան, քանի որ այն իր մեջ համակցում է ինչպես «ռեֆորմիզի», այնպես էլ «պակտերի» տարրեր, «կլոր սեղանների» համաձայնագրեր:

Մ. Խայրուլլինը Արևելյան Եվրոպայի յուրաքանչյուր երկրում նոր սահմանադրությունների ընդունման գործընթացի առանձնահատկությունները պայմանավորում է առաջին հերթին այն հանգամանքով, թե ովքեր են հանդես եկել դրանց նախաձեռնողի դերում՝ հետկոմունիստները, թե նոր քաղաքական էլիտայի ներկայացուցիչները: Այն երկրներում, որտեղ քաղաքական և սահմանադրական փոփոխությունների գործընթացն ի սկզբանե գտնվել է հետկոմունիստների վերահսկողության տակ, հաստատվել են խառը կառավարման ձևեր՝ նախագահա-խորհրդարանական (Լեհաստան, Բուլղարիա, Ռումինիա): Իսկ այն երկրներում, որտեղ քաղաքական փոխակերպումների գործընթացը նախաձեռնել է հակակոմունիստական ընդդիմությունը, հաստատվել են խորհրդարանական համակարգեր (Չեխիա, Հունգարիա, Սլովակիա):

Այն երկրներում, որտեղ անցման գործընթացը կրել է ռևոլյուցիոն բնույթ, (Բուլղարիա, Ռումինիա) նոր քաղաքական համակարգի կոնստիդացիան, ինչպես նախկինում բնութագրվում է անորոշության բարձր աստիճանով: Իսկ այն երկրներում, որտեղ անցման գործընթացը կրել է էվոլյուցիոն (Լեհաստան, Հունգարիա) կամ խառը՝ (Չեխիա, Սլովակիա) բնույթ, քաղաքացիական հասարակության և իրավական պետության ձևավորման գործընթացը իրականացվում է հետևողականորեն և ունի զարգացման հստակ միտումներ:

Գերմանացի հետազոտող **Շ. Մարշալը**, ուսումնասիրելով Արևելյան Եվրոպայի երկրների ժողովրդավարացման գործընթացները 1980-1990-ական թթ., վեր է հանել խորհրդարանի իրականացրած դերակատարության առանձնահատկությունները ժողովրդավարացման գործընթացներում: Այսպես, նա կարևորում էր Հունգարիայում արդեն իսկ 1985 թ. սկսված խորհրդարանական մշակույթի զարգացումը, որը դրսևորվում էր խմբակցությունների միջև բանավեճերով: Խորհրդարանական մշակույթի զարգացման խթաններից մեկը ընտանական համակարգի փոփոխությունն էր:

Լեհաստանում քաղաքական կերպափոխումների շարժիչ ուժը, ինչը հանգեցրեց քաղաքական վարչակարգի ժողովրդավարացմանը, արհեստակցական «Սոլիդար-

նոստ» շարժումն էր, որի անդամները մասնակցում էին օրենսդրական գործընթացներին: Իշխող կոմունիստական կուսակցության դեմ ուժեղ հակադրության և 1989 թ. «կլոր սեղանի» տեսքով տեղի ունեցած բանակցությունների շնորհիվ իշխանությունը խաղաղ ճանապարհով փոխանցվեց ընդդիմությանը: Նման պայմաններում խորհրդարանը դարձել էր ժողովրդավարության պաշտպանը:

Բուլղարիայում ևս խորհրդարանը սկզբիցևեթ փոխակերպման գործընթացների ուղեկիցն էր: Խորհրդարանը (ժողովրդական ժողովը) դարձել էր բուլղարական ժողովրդավարության ծնողը և ժողովրդավարական խաղի կանոններ թելադրող կենտրոնական ինստիտուտը: **Շ. Մարշալը** «պատմական պարադոքս» է որակում այն հանգամանքը, որ Բուլղարիայում կոմունիստական կուսակցության գերիշխանությանը վերջ տալու որոշումն ընդունել է մի խորհրդարան, որն ամբողջությամբ բաղկացած է եղել կոմունիստական կուսակցության անդամներից[16]:

Կատարված հետազոտության արդյունքների հիման վրա կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

Հասարակության քաղաքական արդիականացման օբյեկտիվ խնդիրներից մեկը պետության քաղաքական կարգի այնպիսի մոդելի ընտրությունն է, որն առավելագույնս կհամապատասխանի ազգային շահերին և պահանջմունքներին:

Այս կամ այն երկրի քաղաքական արդիականացման առաջընթացի մակարդակը ցույց տվող յուրօրինակ ինդիկատոր է հասարակության քաղաքական ինստիտուտների համակարգում խորհրդարանի զբաղեցրած տեղն ու դերը: Ընդ որում, քաղաքական արդիականացման տարբեր փուլերում խորհրդարանի իրականացրած դերակատարության պատկերն այլ է: Իսկ քաղաքական արդիականացման ավարտին, երբ արդեն իսկ ստեղծված է կայուն ժողովրդավարական համակարգ, խորհրդարանական ժողովրդավարության ինստիտուտները դառնում են դրա կարևորագույն և անքակտելի մասը: Իշխանության օրենսդիր մարմնի ազատումը ավտորիտար վարչաձևի ճնշումից դեռ բավարար պայման չէ: Կարևոր է պառլամենտարիզմի՝ որպես նորմի ներդրումը և ամրապնդումը հասարակության քաղաքական կյանքում, ինչը ենթադրում է ոչ թե խորհրդարանի դերի գերաթմորում, այլ պետական իշխանության իրականացման մեթոդ, որը կերաշխավորի իշխանության ճյուղերի իրական փոխզսպում և հակակշռում:

Ուսումնասիրված տարածաշրջանի երկրների քաղաքական համակարգերը, անկախ նրանից՝ կիսանախագահական են, թե խորհրդարանական, բնորոշվում են խորհրդարանի՝ որպես իշխանության գլխավոր օրենսդիր և ներկայացուցչական մարմնի գերակա դերի առանձնահատկությամբ: Խորհրդարանների լիազորությունների ծավալն այստեղ բավականին լայն է, սակայն հավասարակշռված իշխանության մյուս ճյուղերի հետ հարաբերություններում:

Պառլամենտարիզմը կարելի է դիտարկել որպես իրավաքաղաքական երաշխիքների որոշակի համակարգ, որը թույլ չի տալիս նոր ձևավորվող ժողովրդավարական համակարգին վերածվել ոչ ժողովրդավարական վարչակարգի որևէ նոր տեսակի: Այս տեսանկյունից պառլամենտարիզմն իր մեջ ժողովրդավարական մեծ ներուժ է պարունակում, քանի որ հենց ներկայացուցչական մարմիններն են իրենց ձեռքում կենտրոնացնում իշխանության հիմնական գործառնությունները, ձևավորում են բարեփոխումների իրավական հիմքը և իրենց ներկայացուցիչներին «պատվիրակում են» գործադիր իշխանության մարմիններ:

Միևնույն ժամանակ պետք է հաշվի առնել, որ քաղաքական անցման համատեքստում տեղի ունեցող փոփոխությունները կոմֆլիկտածին տարրեր են պարունակում: Ուստի պառլամենտարիզմը ինստիտուցիոնալ անորոշության պայմաններում ոչ միշտ է ունակ հանդես գալ քաղաքացիական հասարակության և իրավական պետության կայացման երաշխավորի դերում: Հարկ է նկատել, որ քաղաքական արդիականացման գործընթացը նաև որոշ վտանգներ է պարունակում. արագ ընթացող ժողովրդավարա-

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2020

ցունը երբեմն կարող է տեղի ունենալ վաղաժամկետ և պայմանավորված չլինել քաղաքացիական հասարակության ու քաղաքական մշակույթի զարգացվածության համապատասխան մակարդակով: Նման պարագայում հնարավոր է ձգնաժամային իրավիճակի առաջացում:

Արևելյան Եվրոպայի հետկոմունիստական երկրները ընդունել են «իշխանությունների տարանջատման եվրոպական մոդելը»: Այստեղ չկան նախագահական հանրապետություններ: Այս երկրները կամ մաքուր խորհրդարանական հանրապետություններ են կամ էլ հանրապետություններ, որոնցում պետության գլուխը ընտրվում է բնակչության կողմից, սակայն կառավարությունը ձևավորվում է խորհրդարանի վճռորոշ ազդեցությամբ և քաղաքական պատասխանատվություն է կրում վերջինիս առաջ: Մինևույն ժամանակ այս երկրներում ավելի, քան Արևմտյան Եվրոպայի զարգացած պետություններում, ի հայտ են գալիս նշված կառավարման ձևի թերությունները, քանի որ կայուն և արդյունավետ գործող կուսակցական համակարգն այս երկրներում դեռևս լիակատար չի զարգացել, կառավարությունը երբեմն կուպիցիոն բնույթ է կրում և արդյունավետ չի գործում:

Զնայած 1980-ական թթ. վերջերին տարածաշրջանի երկրներում անցկացված կերպավորումների արդյունքում հաստատվել են ինստիտուտներ և ընթացակարգեր, որոնք հատուկ են ժողովրդավարական համակարգերին, ժողովրդավարությունը տարածաշրջանի երկրներում դեռևս հեռու է արևմտաեվրոպական տարբերակից: Դժվար է ասել ապագայում խորհրդարանական մոդելը տարածաշրջանի երկրներում կզարգանա արևմտաեվրոպական ուղիով, թե կձևավորի սեփական մոդելը՝ արևելաեվրոպական պառլամենտարիզմ:

Որևէ պետության կողմից խորհրդարանական կառավարման համակարգ հռչակելը դեռևս չի նշանակում այնտեղ խորհրդարանական մշակույթի զարգացում: Այսօր աշխարհում նախագահական կառավարման համակարգ ունեցող երկրներ կան, որոնցում պառլամենտարիզմն առավել զարգացած է:

Այն երկրներում, որտեղ ժողովրդավարությունը գտնվում է կայացման փուլում՝ անգամ քիչ արդյունավետությամբ, մասամբ աշխատող խորհրդարանը իրականացնում է բավականին օգտակար, հավասարակշռող գործառույթ ոչ միայն պետական իշխանության համակարգում, այլև հասարակական փոխհարաբերություններում, նրանց միջև հաղորդակցության յուրօրինակ մեխանիզմ է հանդիսանում, որը համախմբում է ժողովրդին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Тридцатилетие краха коммунистических режимов сателлитов в Восточной Европе: развилка десоветизации, <https://www.youtube.com/watch?v=XODA8Jkfk5A>, հասանելի՝ 12.01.2020:
2. **Ачкасов А.**, Международный контекст процессов демократизации в посткоммунистических странах Центральной и Восточной Европы: общее и особенное, Вестник Санкт-Петербургского университета, 2012, с. 65.
3. Тридцатилетие краха коммунистических режимов сателлитов в Восточной Европе: развилка десоветизации, <https://www.youtube.com/watch?v=XODA8Jkfk5A>, հասանելի՝ 12.01.2020:
4. **Ачкасов А.**, Международный контекст процессов демократизации в посткоммунистических странах Центральной и Восточной Европы: общее и особенное, с. 67.
5. Տե՛ս նույն տեղում, էջ 68:

6. Политические и административные реформы в странах Восточной Европы, <https://laws.studio/politicheskaya-teoriya-rf/politicheskiei-administrativnyie-reformyiv-73905.html>, հասանելի՝ 10.10. 2019:
7. **Золов В., Волчкова О.**, Полупрезиденциализм в Центрально-Восточной Европе (Сводный реферат), <https://cyberleninka.ru/article/n/poluprezidentsializm-v-tsentralno-vostochnoy-evrope-svodnyy-referat>, հասանելի՝ 10.10. 2019:
8. Տե՛ս նույն տեղում:
9. Տե՛ս նույն տեղում:
10. **Тарасов И.**, Диалектика парламентаризма и президентализма в Центрально-Восточной Европе, с. 99.
11. **Златанов Б.**, Особенности модернизации на постсоциалистическом пространстве, Московский гуманитарный университет, 2015, с. 71-72.
12. **Хайбуллин М.**, Парламентаризм в условиях политического транзита: опыт стран Центральной и Восточной Европы, <https://www.dissercat.com/content/parlamentarizm-v-usloviyakh-politicheskogo-tranzita-opyt-stran-tsentralnoi-i-vostochnoi-evro>, հասանելի՝ 12.01. 2020:
13. **Լինց Խ., Ստեփան Ա.**, Ժողովրդավարության անցնելու և ժողովրդավարության կայացման խնդիրները, Կովկասի ինստիտուտ, Երևան, 2011, էջ 313:
14. **Մարգարյան Մ.**, Ժողովրդավարության համախմբումը՝ որպես ժողովրդավարական անցման մոդելի կայացման գրավական, <https://mmmargaryan.wordpress.com/2019/05/12/%D5%AA%D5%B8%D5%B2%D5%> հասանելի՝ 25.12.2019:
15. **Пономарева Е.**, Политические системы стран Центральной и Восточной Европы, Московский государственный университет международных отношений, 2014, с. 252:
16. **Marschall St.**, Parlamentarismus. Eine Einführunfg: Parlamentarismus in nicht-demokratischen Systemen, Nomos Verlag, 2016, s. 252.

ԱՄՓՈՓՈՒԳԻՐ

Արևելյան Եվրոպայի հետկոմունիստական երկրների կառավարման համակարգերի արդիականացման հիմնախնդիրները Խոսքովադուխտ Ազատյան

Հոդվածը նվիրված է Արևելյան Եվրոպայի հետկոմունիստական երկրների կառավարման համակարգերի արդիականացման առանձնահատկությունների վերհանմանը փոխակերպման համատեքստում: Ցույց է տրվում, որ չնայած տարբերություններին՝ քաղաքական փոխակերպումների սկզբունքներն ու ուղղությունները տարածաշրջանի պետություններում շատ ընդհանուր գծեր ունեն: Ուսումնասիրված տարածաշրջանի երկրների քաղաքական համակարգերը անկախ նրանից՝ կիսանախագահական են, թե խորհրդարանական, բնորոշվում են խորհրդարանի՝ որպես իշխանության գլխավոր օրենսդիր և ներկայացուցչական մարմնի գերակա դերի առանձնահատկությամբ:

РЕЗЮМЕ

**Проблемы модернизации систем управления посткоммунистических стран в
Восточной Европе
Хосровадухт Азатян**

Ключевые слова: Восточная Европа, политическая модернизация, система управления, трансформация, революция, эволюция, постсоциалистическое развитие, парламент.

Статья посвящена выявлению особенностей модернизации систем управления посткоммунистических стран Восточной Европы в контексте трансформации. Представляется, что, несмотря на различия, принципы и направления политических преобразований имеют много общего в странах региона. Политические системы стран изучаемого региона, будь то полупрезидентские или парламентские, характеризуются доминирующей ролью парламента как основного законодательного и представительного органа власти.

SUMMARY

**The Issues of Modernization of the Management Systems of Eastern European Post-Communist Countries
Khosrovadukht Azatyan**

Keywords: Eastern Europe, political modernization, political system, transformation, revolution, evolution, post-socialist developments, parliament.

The article is dedicated to discovering the peculiarities of modernization of the management systems of post-communist countries in Eastern Europe in the context of transformation. It should be noted, that despite the differences, the principles and directions of political transformation have many common lines in the countries of the region. The political systems of the countries of the explored region, whether semi-presidential or parliamentary, are characterized by the dominant role of parliament as the primary legislative and representative body of power.